



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ԷԶԸ

Հարցի պատմությունը ծայր առավ 1988 թվականի սկզբներից, երբ այդ թվականի փետրվարի 20-ին Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պետական-հասարակական բարձրագույն օրգանը՝ Դեպուտատների մարզային խորհուրդը, ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընդունեց համարձակ և Խորհրդային Միության ժողովուրդների պատմության մեջ նախադեպը չունեցող մի որոշում, այն է՝ մարզը դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից և միացնել Հայկական ԽՍՀ-ին, այսինքն՝ իր մայր երկրին ու իր արյունակից ժողովրդին: Իսկ քանի որ, հասկանալի տրամաբանությամբ, Ադրբեջանական ԽՍՀ-ի կառավարությանը այդ որոշումը, մեղմ ասած, չէր կարող հաճելի լինել, չնայած այն իրականացվել էր կատարելապես հավատարիմ մնալով ԽՍՀՄ գործող Սահմանադրության թե՛ օրենքին և թե՛ ստադիա, ապա որպես անդրադարձ պաշարի ձև մշակվեց ավելի պարզունակ և հետևաբար ավելի ստոր մի գործելադրանակ. դիմել գրգռիչ կոչերի ու թշնամություն հարուցող սադրանքների, համազգային ատելություն խրախուսել երկու հարևան ժողովուրդների միջև, ապօրինի և անհիմն համարել Դեպուտատների մարզային խորհրդի որոշումը և այլն: Փետրվարի 20-ից սկսած, ծայր առան բազմահազարանոց միտինգների ու ցույցերը, թե՛ Հայկական և թե՛ Ադրբեջանական հանրապետությունների տարածքներում:

Այս տագնապայից ու դրամատիզմով հարուստ իրադրության պայմաններում, հասկանալի է, անտարբեր չէր մնալու նաև Մայր Աթոռը և մանավանդ նրա Հոգևոր Գլուխը: Հիշյալ Մարզային խորհրդի որո-

շումից հինգ օր անց, 1988 թ. փետրվարի 25-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Վազգեն Առաջինը ընդարձակ մի հեռագիր հղեց Մոսկվա, ԽՄԿԿ Կենտկոմի Գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին: Այն մի հրաշալի փաստաթուղթ է, որը բնութագրում է ներքին ապրումների ու հույզերի՝ Վեհափառ Հայրապետին համակած ամբողջ համախումբի և միաժամանակ, առավել քան որոշակիությամբ բացահայտում է Մայր Աթոռի ազգային-հասարակական և հոգևորական ռիթմերը: «Վերջին օրերին, — կարդում ենք հեռագրում, — Խորհրդային Հայաստանի քաղաքացիները, ի գլուխ ունենալով գիտնականներ, ակադեմիկոսներ, գրողներ, արվեստագետներ, ինստիտուտների ուսանողներ, բանվորներ և ծառայողներ, ծանրորեն վրդուկված, խաղաղ ցույց են կատարում Երևանում, պահանջելով որ Լեոնային Ղարաբաղի հարցը Հայաստանին միանալու, արդար և օրինավոր լուծումն ստանա, համաձայն Խորհրդային Միության Սահմանադրության նախագծումների, ազգային ինքնորոշման իրավունքի վերաբերյալ»:

Հայրապետական դիմում-հարցադրումն այնքան որոշակի է, որ համապատասխան մեկնաբանությունների կարիք պարզապես չունի. այսինքն՝ դրականորեն լուծել Լեոնային Ղարաբաղի հարցը, քանզի այն օրինական արտացոլումն է «Խորհրդային Միության Սահմանադրական նախատեսումների»: Իսկ քանի որ խանգարիչներն ու սադրիչները արդեն կարողացել են անել իրենց սև գործը, այսինքն այլևայլ բռնույթի անկարգություններ ու ազգային խռովք կազմակերպել ամենուրեք, ապա՝

«Ծանրորեն մտահոգված ենք ստեղծված տագնապի կացության առաջ, մանավանդ որ լուրեր ենք ստացել, թե Ղարաբաղում եղել են մարդկային զոհեր և վրնասվել են հայկական պատմական և եկեղեցական մեկից ավելի հուշարձաններ»:

Վազգեն Կաթողիկոսի այս մտահոգությունը, ինչպես դժվար չէ մակաբերելը, թե՛ հասկանալի էր և թե՛ պատճառաբանված, ինչպես որ հասկանալի էր ու միանգամայն մակաբերելի ամբողջ հեռագրի բալկանյան անգիջում տոնը:

Նույն այդ օրը, այսինքն 1988 թ. փետրվարի 25-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը ընդարձակ ելույթով հանդես եկավ Երևանի հեռուստատեսությամբ. ելույթ, որը ըստ էության և ըստ ներքին տարողության, կոչ էր, ողորված համայն հայությանը: «Ծանրորեն մտահոգված եմ նաև ես,— սկսել է իր ելույթը Վեհափառը,— և բաժանում եմ մեր ժողովրդի հոգումը Լեռնային Ղարաբաղի մարզը Խորհրդային Հայաստանին միացվելու հարցի կապակցությամբ: Ես գտնում եմ, որ այդ առաջադրությունը բնական և օրինական ու սահմանադրական է, որով հավատում եմ, թե մեր օրերի վերակառուցման և դեմոկրատիայի ոգով, Խորհրդային Միության բարձր իշխանությունները ամենայն կարևորությամբ կհանգեն մի արդար և անկողմնակալ որոշման»:

Հայրապետական խոսքի այս հատվածը, ինչպես դժվար չէ նկատելը, ավելի ընդգծումն ու խորացված ձևով վերադարձնում է Լեռնային Ղարաբաղի հարցի նրկատմամբ Մայր Աթոռի որդեգրած այն որոշակի քաղաքականության, որի հիմնադրույթները արդեն տեսանք ԽՄԿԿ Կենտկոմի Գլխավոր քարտուղարին առաքված հեռագրում: Ավելի ուշագրավ է հեռուստաեկույթի շարունակությունը. «Այս օրերս ես քաղմաթիվ հեռագրեր ու հեռախոսազանգեր եմ ստանում նաև արտասահմանի մեր եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, որոնք Սփյուռքի ավելի քան երկու միլիոն հայության անունից խնդրում են իմ միջնորդությունը Խորհրդային Միության բարձր ղեկավարության առաջ, որպեսզի արդարացի լուծում ստանա Հայկական Ղարաբաղի հարցը, համաձայն Խորհրդային Միության Սահմանադրության, համաձայն Ղարաբաղի ժողովրդական դեպուտատների խորհրդի որոշման, համաձայն դեմոկրատիայի սկզբունքների»:

Այսպես ուրեմն. «Ղարաբաղյան հարցի» արդարացի, անկողմնակալ լուծման և «համաձայն դեմոկրատիայի սկզբունքների»

կարգավորման գործին սկսել էր իր աներկմիտ միջամտությունը բերել նաև Հայ Սփյուռքը, և որ առանձնապես ընդգծելի էր, իր միջամտությունն էր բերում վճարկան ճաչմի իրավունքով: Մեր ժողովրդի պատմության մեջ այս էլ ո՛րերորդ անգամ, Մայր Հայրենիքի կողքին, հարազատ եղբոր պատրաստակամությամբ կանգնում էր նրանից ողբերգականորեն անջատված հատվածը՝ Հայ Սփյուռքը, և կանգնում էր մինչև վերջին հնարավորությունը օգնական ու սատար հանդիսանալու, նրան համաձայն ու վիշտը նաև իրենց համարելու և ամեն ձևով այն ամոքելու, իսկ տրվալ դեպքում դարաբաղյան հարցը իր տրամաբանական ու արդար լուծմանը հասցնելու անխախտ վճարկանությամբ: Իսկ քանի որ «ավելի քան երկու միլիոն» սփյուռքահայությունը Մայր Հայրենիքի ու բնաշխարհի հայության հոգևոր-իրավական ստատուսի արտահայտության բարձրագույն դրսևորումը ճանաչում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և անձամբ իրեն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին, ուրեմն նրանց միջոցով ու օգնությամբ էլ կամենում էր մասնակից լինել տեղի ունեցող ազգային իրադարձություններին: Այս հանգամանքը նախ գալիս էր ապացուցելու, որ ժամանակային տարածքի առումով շատ կարճ տևողություն ունեցող «Ղարաբաղյան հարցը» հասարակական-քաղաքական իր ներքին մեծ բովանդակության պատճառով, արդեն դադարել էր նեղ-հայկական, սուկ «Մայր Հայրենիքային» խնդիր լինելուց և մի անգամից համազգային ծավալ ու մասշտաբներ էր ստացել: Եվ երկրորդ՝ հասարակական-քաղաքական այդ մեծ բովանդակությունը, ժամանակի թելադիր տրամաբանության համաձայն, վիճակվում էր իր ուներին տանել նաև հայ հոգևոր դասին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին և իրեն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին:

Հեռուստաեկույթի շարունակության մեջ մեր առջև հառնում է իր ժողովրդի հոգևոր ցավերը կիսող, այդ ցավերն ու տառապանքները նաև իրենք համարող տիպար Հայրապետը: Հայրենիքի ու ազգի առաջ պատասխանատվության խոր զգացումը կա նրա խոսքում, և մանավանդ արդի բարդագույն իրավիճակի պայմաններում իր առջև ծանրացած՝ ամենևին էլ ոչ դյուրին անելիքների խոր գիտակցությունը: Բայց և՛ կա առաջիկայում իր ծավալելիք գործունեությունը որոշակիորեն տեսնելու, զարգացող իրադարձությունները ողջամտորեն ու պթափ գնահատելու հստակ նպա-

տակ-նախագիծը. «Հարազատներ մեր, ես այս օրերին գնահատել եմ ձեր հուզումը և համաժողովրդական արտահայտությունները: Արդեն ամեն ինչ արված է, և այժմ անհրաժեշտ է, որ լավատեսությամբ ու հարգանքով՝ մեր հայրենիքի պետական բարձր իշխանությանց հանդեպ, մնանք խաղաղ ու կարգապահ, լծված մեր ամենօրյա աշխատանքներին և սպասենք առաջադրված հարցերի լուծման: Այլապես արդար գործի հաջող ընթացքը կարող է խանգարվել և չնախատեսված բարդությունների առաջ կանգնեցնել մեզ: Մեր բոլորիս նպատակը պետք է լինի ոչ թե ձախողեցնել, այլ հաջողությամբ պսակել արդարությունը»:

Եվ վերջում, Հայրապետական միանշանակ, միանգամայն աներկմիտ ահագնագնախազուշացումը. «Լսեցե՛ք իմ ձայնը. լսեցե՛ք իմ Հայրապետական հորդորը: Ուշադրություն, ուշադրություն, զգո՛ւյշ եղե՛ք»:

Խոհեմության ու զգուշավոր լրջմտության Հայրապետական այս կոչ-հորդորը հասկանալի կդառնա, եթե միտ առնենք, որ Հանրապետության ամբողջ տարածքում և մանավանդ քաղաքամայր Երևանում ծայր առած ազգային-հայրենասիրական առողջ ու հզոր շարժումը, որն արժանի էր միայն բարձր դրվատանքի ու քաջալերության, շուտով ծնեց գալստամիտ հայրենասիրություն խաղաղու, մեր ժողովրդի համար սրբազան գաղափարներն ու անունները պարզունակորեն շահատակելու, առանց դրա համար գեթ ամենաընդհանուր պատրաստության՝ ազգային գործիչի քղամիդով պնդվելու փանջունական գաղափարաբանությունը: Սա էր ահա այն վտանգավոր մտայնությունը, որն ի դեպ, քիչ բացասական դեր չկատարեց այդ ժամանակաշրջանում և որից իրեն լսող համագլխներին շտապում էր նախազգուշացնել Նորին Ս. Օծությունը: Որպես եզրակացություն ավելացնենք, որ Վեհափառ Հայրապետի՝ թե՛ հեռուստալուրջ, վերցրած իր ամբողջության մեջ, և թե՛ մանավանդ այնտեղ եղած հարցադրումները, հորդորներն ու կոչերը, իրենց անկապտելի դերն ունեցան Հայկական-Ղարաբաղյան ամբողջ համագլխին շարժման ընթացքում, որպես այդ շարժմանը ներքին որոշակի բովանդակություն հաղորդող և հետևաբար, ամբողջ այդ շարժումը հոգևորական-հասարակական բարձրագույն մակարդակով ճանաչման ու գնահատանքի արժանացնող կարևոր գործոններից մեկը:

Իսկ դեպքերը շարունակում էին զարգանալ:

Հիշատակված հեռուստալուրջից մի քանի օր անց, 1988 թ. փետրվարի 28-ին, Վազգեն Ա. Կաթողիկոսը Մայր Աթոռում բանակցություններ վարելու համար ընդունեց ԽՍՀՄ Կենտկոմի քաղքչորդի անդամության թեկնածու Վ. Դուգինսկին և ԽՍՀՄ Կենտկոմի քարտուղար Ա. Լուկիանովին, որոնք կուսակցական-պետական առաքելությամբ արդեն մի քանի օր էր, ինչ գրտնրվում էին Հայաստանում: Ցավոք արտի, բանակցությանը մասնակցող բարձր կողմերից և ոչ մեկը իրենց քննարկած հարցերի կամ շոշափած խնդիրների վերաբերյալ որևէ ամբողջական գրավոր շարադրանք չի թողել: Մեզ հասած միակ կարճատև տեղեկությունը Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի մայիս-հունիսյան համարում տպագրված հաղորդումն է, կարճատև ալմբան, որ ամբողջությամբ բերում ենք ստորև: «Բանակցության ընթացքում ուշադրության առնվեցին Ղարաբաղում ստեղծված կացության պատճառները՝ ազգային, տնտեսական և մշակութային: Հայր Հայրապետը նշեց, որ Ղարաբաղի հարցը անհրաժեշտ է որ արդար լուծում գտնի խաղաղ ճանապարհով, հայ և ադրբեջանցի ժողովուրդների փոխադարձ հասկացողությամբ, օրինականության և սահմանադրական հիմքի վրա: Բանակցությանը ներկա էին նաև ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանն ու տեղակալ Ռաֆիկ Զարգարյանը:

Այս փոքրիկ և առաջին հայացքից անմեղ հաղորդումը, սակայն, որոշ ներհայաց խորհրդածությունների տեղիք է տալիս: Նախ՝ ուշադրությունից չի վրիպում այն նյարդային, ջղաձիգ տոնը, որն իրեն որոշակիորեն զգացնել է տալիս գրեթե ամեն պարբերության մեջ: Չկա շարադրանքի հանդարտ հանդիսավորությունը, խուսակիցների խոսքի վերարտադրության այն վեհաշուք էպիկականությունը, որն այնպես հատկանշական է լինում նման իրադարձության պայմաններում: Նույնիսկ անբեկանելի օրինաչափություն դարձած «Հանդիպումն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում» կամ «Տեղի ունեցավ ջերմ գրույց, փոխադարձ բարեմադրություններով» կամ «Քննարկվող հարցերի վերաբերյալ երկու կողմերն էլ դրսևորեցին հայացքների կատարյալ համերաշխություն» և այլ՝ այս կարգի ավարտաբանականները, որոնցով գրեթե մշտապես ավարտվում են

Հայրապետական հանդիպումներն ու բանակցությունները մամուլի սեփականությունը դարձնող հաղորդագրությունները, այստեղ բացակայում է:

Երևույթը հարկավոր խորությամբ մեկնարանել կարողանալու համար պետք է նորից հիշեցնենք ինչպես Մայր Աթոռի, այնպես էլ Վեհափառ Հայրապետի մշակած հոգևորական-ազգային քաղաքականությունը այն հարցերի վերաբերյալ, որոնց մասին արդեն խոսեցինք: Այսինքն, ապահովելով սահմանադրական օրինականությունն ու դեմոկրատական ազատախոհությունը, և հարգելով Լեոնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշումը, պետք է մարզը դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ-ի ստարածքից և միացնել Մայր Հայրենիքին: Մենք գիտենք նաև Քաղբյուրոյի՝ Հայաստան եկած երկու ռուս անդամների պետական-կուսակցական դիրքորոշումը: Այսինքն, բավարարվել սոսկ և միայն հաշտարարական կոչերով, եղբայրության ու անհատական հարեկամության հորդորներ կարող երկու՝ իրար նկատմամբ ամենևին էլ եղբայրաբար չտրամադրված ազգությունների միջև և առանց լրջմտորեն քննելու համազգային այդ հակասությունները ծնող պատճառները՝ դրանցից բխած հետևանքները վերացնել կարողանալու համար, դիվանագիտորեն «չնկատել» այդ պատճառները և եռանդային ճիգ ու ջանքեր թափել հետևանքները հնարավորին չափ շուտ վերացնելու գծով: Մեծ խորամանկություն պետք չէ ունենալ նկատելու համար կողմերի՝ ազգային քաղաքականության հարցում եղած դիրքորոշումների տարբերությունը, իսկ սա էլ, իր հերթին, գալիս էր ամենայն որոշակիությամբ հավաստելու, որ հիշատակված այդ բանակցությունները շատ էլ հանգիստ ու հանդարտ մթնոլորտում չէ, որ անցել են:

«Բանակցությունների սկիզբը շատ խաղաղ էր, երկու կողմն էլ դրսևորում էր իրար փոխադարձաբար հասկանալու և ճիշտ ըմբռնելու անսքող ցանկություն,— մայիսի 5-ին տեղի ունեցած հարցազրույցի ժամանակ մեզ պատմեց ընկ. Ֆադեյ Սարգսյանը,— Առաջինը խոսք վերցրեց Վեհափառ Հայրապետը: Նա Դոլգիխին ու Լուկիանովին համառոտակի շարադրեց Հայ Եկեղեցու պատմությունը, շեշտելով հատկապես այն հանգամանքը, որ ժողովրդի գոյատևման համար բոլոր շրջադարձային պահերին, մեր հոգևոր առաջնորդները ապավինել են ռուս ժողովրդին, նրա անշահախնդիր օգնությանն ու բարեկամությանը: Վեհափառի խոսքը հանդարտ էր, հան-

գիստ, հագեցած թվերով, փաստերով, ամուններով և ներշնչող տպավորություն էր թողնում: Ապա Նորին Ս. Օծությունն անցավ Ղարաբաղի հարցին: Իրադրության համառոտ պատմականը տալուց հետո, նա ասաց, որ ուրիշի հողին տիրանալու ցանկություն, կամ հողատիրական նեղմիտ պահանջ չէ, որ այսօր ներկայացնում է հայ ժողովուրդը, այլ արտահայտում է իր օրինական, օրենսդրական իրավունքը, որը նախատեսված է նաև Պետության օրենքով, այսինքն՝ Սահմանադրությամբ:

Պետք է ասել, որ թե՛ Դոլգիխը և թե՛ Լուկիանովը բավականին տեղյակ էին Ղարաբաղյան դեպքերին ու նրանց պատմությանը: Նրանք համաձայնեցին Վեհափառի հետ, բայց հավելեցին, որ պետք է անել ամեն ինչ, երկու ժողովուրդների միջև խաղաղությունը վերականգնելու համար և որ Ամենայն Հայոց հոգևոր առաջնորդի դերը այս հարցում առավել քան նշանակալից է: Դրան ի պատասխան Վեհափառն ասաց, որ խաղաղությունը կարելի է վերականգնել այն դեպքում, երբ իրագործվի հայ ժողովրդի սահմանադրական պահանջը Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ: Նա հիշեցրեց, որ ադրբեյջանցի մի նամակ արդեն գրել է Գորբաչովին: Բերեց փաստեր, թե ինչպես թուրքերը քանդում են Ղարաբաղի հայկական պատմական հնությունները, հիշատակեց Գանձասարի ավերումը և հավելեց, որ այդ կապակցությամբ ինքը երկու անգամ դիմել է Քաղբյուրո և պատասխան չի ստացել: Իսկ ներկայիս հարցերը պետք է իրենց տրամաբանական լուծումը ստանան, որպեսզի հնարավոր լինի խոսել երկու ժողովուրդների միջև խաղաղության վերահաստատման մասին: Թե՛ Դոլգիխը և թե՛ Լուկիանովը խոստացան ի մոտո գրառվել այդ հարցով: Երկու կողմերի՝ բանակցությունը տևեց մոտ մի ժամ և սկսելով շատ հանգիստ՝ բավականին լարված ավարտ ունեցավ:

Այսքանն է մեզ հայտնի Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Ս. Վազգեն Ա-ի, և Խորհրդային կառավարության կողմից Հայաստան առաքված երկու պատվիրակների՝ Վ. Դոլգիխի և Ա. Լուկիանովի միջև կայացած բանակցություններից: Ընդգծելին այստեղ այն է, որ Վազգեն Կաթողիկոսը, արտահայտիչը անշուշտ հանդիսանալով ամբողջ հայ ժողովրդի և Մայր Աթոռի տրամադրության, ոչ միայն չի զիջել իր դիրքերը, այլև շարունակել է պնդել հարցի լուծման միակ արդարացի՝ «սահմանադրական հիմքի» վրա:

Եվ բացառված չէր, որ դեպքերի այսօրինակ, ոչ այնքան հախտուն զարգացմանը դեռ հնարավոր կլինեին գեթ որոշ չափով բնականոն ընթացք հաղորդել և նրանց տրամաբանական զգաստություն թելադրել, բացառված չէր, որ Հայրապետական անդադրում գործունեությունը կարողանար թեկուզ փոքր չափով ինչ-որ գոհացուցիչ արդյունքների հասցնել ազգային ու համազգային մեր ամբողջ այդ արդարացի եռքը, եթե աշխարհ չգար արձաթաթալ փետրվարը...

1988 թվականի մարտի սկզբին, Հայաստանի ԿԿ Կենտրոնական Կոմիտեի առաջին քարտուղար ընկ. Կարեն Դեմիրճյանը, հանդես գալով Հանրապետական հեռուստատեսության արտակարգ հաղորդումով, իր ժողովրդին գուժեց Ադրբեջանական Հանրապետության Սումգայիթ քաղաքում, փետրվարի 28-ին տեղի ունեցած չարաշուք դեպքերի մասին: Հետագա օրերի ընթացքում ստացվող սահմանեցուցիչ տեղեկությունները եկան ամենայն որոշակիությամբ բացահայտելու իր ահալորությունը՝ ապշեցնող իրականությունը: Որ Սումգայիթ քաղաքում իրականացվածը ոչ թե «մի խումբ խուլիգանական տարրերի հրահրած անկարգություններն են», որի ժամանակ «տեղ են գտել սանձաբաժկության ու բռնության դեպքեր» («Խորհրդային Հայաստան», 1988 թ. № 51, «Հաղորդագրություն»), ոչ թե եղել է սոսկ և միայն այն, որ «խուլիգանական տարրերի շնորհիվ հակաիրավական գործողությունների մեջ են ներքաշվել անկաշուն, տհաս մարդիկ, որոնք ընկել էին ստահող լուրերի ազդեցության տակ» և որոնք, այսինքն «քրեական հանցագործ տարրերը բռնացման գործողություններ և կողոպուտներ էին կատարել» (Ամ, 1988 թ. № 55, «Իրադրությունը Սումգայիթում»), — ինչպես այդ ամենը «քննուշ» կերպով որակում էր ՏՍՄՄ-ը իր հաղորդագրությունների մեջ, — այլ տեղի էր ունեցել խնամքով նախապատրաստված և «աշխատանքային» գործողությունների առավել քան որոշակի մեթոդներ ունեցող քստմեղի մի ոճրագործություն: Նորօրյա այդ բարբարոսությունը իրականացվել էր միայն և բացառապես Սումգայիթ քաղաքի հայազգի բնակչության նկատմամբ, սուսանց ստի և տարիքի խտրականության, իրականացվել էր միջնադարյան վանդալ-բարբարոսներին բնորոշ վայրենաբարո եղանակներով և այդ ամենը չէր կարելի որակել որևէ այլ կերպ, քան հայկական նոր ցեղասպանություն կամ նեոնացիո:

Այսպիսին էր փաստերի դաժան տրամաբանությունից բխող ողորակի հետևությունը, դրան շատ շուտով հանգեց ամբողջ հայությունը, ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում և բնականաբար, գործողությունների համապատասխան եղանակներ մշակեց իր համար: Դրա ապացույցը նախ այն եղավ, որ Սփյուռքի գրեթե բոլոր հայաշատ վայրերից, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և անձամբ իր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անունով սկսեցին ստացվել բազմաթիվ հեռագրեր, — սկսած անհատներից և վերջացած ամենատարբեր բնույթի հայկական կազմակերպություններով, — որոնց հեղինակները իրենց անաբող զայրույթն ու վրդովմունքը հայտնելով տեղի ունեցած անլուր վայրագության նկատմամբ, մխիթարանքի խոսքեր էին հղում «իրենց տուժյալ քույրերու ու եղբայրներու ընտանյաց», ի սրտե կիսում էին նրանց մեծ կսկիծը և հավաստում իրենց ամենաջերմ պատրաստակամությունը, հնարավոր բոլոր ձևերով ու միջոցներով օգնական ու սատար հանդիսանալու: Սրան հաջորդեց Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի մի քանի արտահերթ նիստերի գումարումը, որտեղ, ի թիվս այլ հարցերի, բնության ատարկա դարձվեցին Սումգայիթյան իրադարձությունները: Իրականությանը խիստ մոտ է լայնորեն տարածված այն խոսքերույցը, որ Վեհափառ Հայրապետը, մեծապես մտահոգված տեղի ունեցածով, երկու խստաշունչ հեռագիր է ուղարկել Մոսկվա, «պատկան իշխանություններին» և ըստ ամենայնի վերլուծելով Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանությունը, պահանջել է քաղաքական գնահատական տալ երևույթին, որեմն և՛ անողորմաբար պատժել մեղավորներին և այլն:

Իրադարձությունների այսպիսի հախտուն ու շիկացած պայմաններում, իրադարձություններ, որոնք հղի էին անկասելի հետեւվանքներով, և որոնք առավել քան սրեցին հայ-ադրբեջանական ստանց այն էլ լարված հարաբերությունները, Մայր Աթոռի պաշտոնատեղի «Էջմիածինը», իր 1988 թ. № 5—6-ում, հրապարակեց հետևյալ անաբառելի հայտարարությունը. «Մարտի 12-ին, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում ընդունեց այցելությունը Բաքվի Օելյուկ-Իսլամ Խաչի Ալլահշուքյուր Փաշա-Ջադեի երկու ներկայացուցիչների, որոնք Ս. Էջմիածին էին եկել Ամենայն Հայոց Հայրապետին հանձնելու իրենց կրոնապետի ուղերձը: Զրույցին ներկա էին Հայ Եկեղե-

ցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանն ու տեղակալ Ռաֆիկ Զարգարյանը: Մարտի 14-ին Նորին Սրբությունը պատասխան նամակ ուղարկեց Բաքվի Ծելյու-Ուլ-Իսլամի ուղերձին»:

Թե ինչ էր մտածել մուսուլմանական հավատի աղքեջանական պարագրիտը Մայր Աթոռ ուղարկելով նման անպատեհ մի պատվիրակություն, ազգային-հասարակական կամ հոգևոր բնույթի ինչ հարցեր էր կամենում շոշափել այդ պատվիրակության հնարավորությունների ու կարողությունների սահմաններում, իրոք արժանապատիվ Փաշա-Ջադեն այնքան վատահ էր իր նամակի գորավոր ուժի ու անբեկանելի ազդեցության վրա, որ որոշել էր հայ-աղքեջանական խստագույնս քարդացած հարցերը լուծել ընդամենը մեկ նամակով, — դժվար է ասել: Բայց իրողությունը մնում էր որպես առկա և անբեկանելի փաստ...

«Բաքվի հոգևորականների այդ պատվիրակության գալուստը Մայր Աթոռ, — մայիսի 12-ին կայացած հարցազրույցի ժամանակ մեզ պատմեց դիվանապետ պ. Դարգև Թահրազյանը, — ոչ միայն կատարելապես անապասելի էր, այլև ինչ-որ տեղ շատ տարօրինակ ու զարմանալի: Եվ իրենք, պատվիրակներն էլ, պետք է ասեմ, բավականին անհարմար փոճակում էին զգում իրենց. աշխատում էին հնարավորին չափ քիչ դուրս գալ իրենց հատկացված սենյակներից, քիչ շփվել մեր աշխարհիկ և մանավանդ հոգևոր դասի ներկայացուցիչների հետ: Ավելացնեմ, որ նրանք որևէ բանակցություններ վարելու, կամ մեր երկու ազգերի հետ կապված հոգևոր-հասարակական բնույթի խնդիրներ քննարկելու լիազորություններ չունեին: Նրանք, քիչ կոպիտ ասած, ընդամենը փոստատարի առաքելություն ունեին: Եվ վեհապետ Հայրապետի մոտ ընդունելության ժամանակ, — սա կարելի է ասել ամենայն հավանականությամբ, — որևէ սկզբունքային խոսակցություն չէր կարող լինել հայկուր պատշանի խոսքերից և նման պայմաններում առկա առօրեական բարենախոսություններից բացի: Նրանց առաքելության նպատակը բացառապես իրենց հոգևոր պետի նամակը քերելն ու տեղ հասցնելն էր»:

Խաչի Ալլահշուքյուր Փաշա-Ջադեն՝ վեհապետ Հայրապետին հասցեագրված նամակը, որն ի դեպ, գրվել է 1988 թ. մարտի 10-ին, սկսվում է երկու ազգերի անշահախնդիր բարեկամության, առ հայ ժողովուրդը, հայոց հոգևոր դասը և մանավանդ առ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինն ունեցած մեծագույն

հարգանքի ու հիացմունքի քաղմանն ու քաղմատեսակ հախատումներով: Եվ խնդրի «քաղաքավարական» կողմը հավանորեն ավարտված համարելուց հետո, Ծելյու-Ուլ-Իսլամը անսիջապես անում է հետևյալ դիտարկումը. «Կրոնական պարտքը, ժամանակակից և հետագա սերունդների առջև բարդական մեր պատասխանատվությունը պարտավորեցնում է մեզ չխնայել մեր ջանքերը խաղաղության հասնելու վեհաշուք շորձի համար, ծառայել մարդու բարօրությանն ու երջանկությանը, ըստ կարելիության ամրապնդել բարեկամության և փոխըմբռնման կապերը մեր ժողովուրդների միջև: Զկա այնպիսի մի ժողովուրդ և չկա այնպիսի մի հավատ, որի համար բաղձալի չլինեն այն ժամանակները, երբ խաղաղությունը, եղբայրությունը և փոխադարձ համերաշխությունը կհաղթանակեն աշխարհիս բոլոր ծագերում: Մեզ, մուսուլմաններին համար, սրբազան է Ամենաբարձրյալ Ալլահի կոչը, որը որպես մեծագույն բարիք, ողոված է համայն մարդկությանը. «Մարդիկ, գործեցեք խաղաղությամբ»:

Այսպես ուրեմն. հարցը ըստ խորության քննելու փոխարեն, մերկապարանոց և ինչ-որ տեղ անլուրջ քարոզ խաղաղությանն ու նրա անհրաժեշտության մասին. կարծես թե այս լուսնի տակ երբևէ եղել են ազգեր, որոնք դեմ են եղել խաղաղությանը, կամ ժխտել են նրա կենսական կարևորությունը: Հայ-աղքեջանական հարաբերությունները հանգամանորեն, պատմա-սոցիոլոգիական խորությամբ քննելու և այդ հարաբերությունների՝ աննախադեպորեն սրվելու հետ կապված հարցերը անկողմնակալ կերպով մեկնաբանելու, վերլուծելու, դրանից բխող եզրակացությունները հրապարակելն հայտարարելու փոխարեն, բավականին պարզամիտ տրամաբանությամբ շրջանցել, հույսը դնելով այն բանի վրա, որ ես, ում առաքված է նամակը «չի նկատի» այդ ամենը: «Զհիշել», որ ընդամենը տասն օր առաջ եղել էր Սուրբապիթի եղեռնագործությունը, որտեղ արձախումների մարդախոշոշ ոճիմար մույժ «Ամենաբարձրյալ Ալլահի» անուհի ու նրանով գորավիզ, անում էր իր սև գործը, և գեթ հավուր պատշանի, մի քանի ցավակցական խոսք չասել, թեկուզ դիվանագիտություն խաղալու հասարակ տրամաբանությունից ելնելով: Այսպիսին է նամակագրի՝ տիպիկ թուրքական մտածելակերպը...

Նամակի շարունակության մեջ հարգապատիվ Փաշա-Ջադեն արդեն այնքան է ստաջ գնում, որ սկսում է... բարեկամաբար

խորհուրդներ տալ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, թե առաջիկայում որոնք են լինելու իրենց անելիքները, ազգային հարցերը բնականոն լըծալի մեջ դնելու համար. այսինքն «Զվտահեղով մեկս մյուսին, մենք չենք կարողանա ապրել մարդկանց մեջ.— այս է պահանջում հավատն առ Ամենաբարձրը: Բարեկամության, եղբայրական համագործակցության և աշխարհիս վրա բնակվող ժողովուրդների սերտ համագործակցության մեջ է մեր երկրային հայրենիքի հզորությունն ու քարզավածումը: Այս անվիճելի ճշմարտության հասկանալը պետք է արթնացնի մեր՝ հոգևորական գործիչներին մեջ անբեկանելի եռանդ, որպեսզի միացնելով մեր սրտերը, նպաստենք բարեկամության և եղբայրական կապերի ամրապնդմանը մեր երկու ժողովուրդների միջև, որոնց հոգևոր հովիվներն ենք մենք հանդիսանում»:

Այսպիսին է մեծապատիվ Օեյս-Ու-Իսլամի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ին առաքած նամակը, իր սաղարմիտ ներքին տարողությամբ, իր անկյալում, ցնցոտիամիտ տրամաբանությամբ և երևույթները վերլուծելու ու ազգայնորեն իմաստավորելու՝ ոչ մի քննադատության չլիքացող մտածելակերպով: Եվ հասկանալի է, որ մարտի 14-ին գրած իր պատասխան-նամակում Վեհափառ Հայրապետը շեշտը դնելու էր հենց այն հարցերի ու խնդիրների վրա, որոնք «պատահաբար» դուրս էին մնացել Փաշա-Զադեի նամակից և այդ հարցերին ու խնդիրներին անդրադառնալու էր միայն ու բացառապես այն տեսանկյունից, որի հիմնադիր սկզբունքները մենք արդեն քննել ենք:

Իսկ դեպքերը իրենց անկասելի ընթացքով պետք է շարունակելի գարգանալ և ի վերջո գալին-հասնելին իրենց միանգամայն օրինական բարձրակետին, ինչը և եղավ: 1988 թվականի մարտի 13-ին, Ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց հանդիսավոր հոգեհանգիստ, նվիրված Սուրբ Երեմիայի զոհերի հիշատակին, որտեղ Հայրապետական ընդարձակ ելույթով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Առաջինը:

Ինչպես և պետք էր սպասել, Հայրապետական ելույթի սկիզբը հար և նման է նման իրադրության պայմաններում և այդ իրադրության թելադիր տրամաբանությամբ ավարտվող հոգևորական-ազգասիրական խոսքին, այսինքն. «Այսօր հավաքվել ենք ամենայն հայոց այս սուրբ տաճարի կամարների ներքո, աղոթելու մեր ժողովրդի զավակների հոգիների համար, որոնք վերջերս

զոհվել են Ադրբեջանի Հանրապետության Սուրբապիթ քաղաքում, ողբերգական պայմաններում: Մենք ողբում ենք մահը բոլոր զոհյալների՝ անպաշտպան խաղաղ բնակիչներ, աշխատավոր մարդիկ, նաև կանայք և երեխաներ, անպատեղի կերպով, մութ գիշերին ենթարկված հարձակումների ու խոշտանգումների»:

Ծարունակելով այս ձևով, Վեհափառ Հայրապետը քիչ անց շեղվում է քարոզխոսության համար դասական դարձած և հետևաբար հաստատուն հեռտորական «ընթացքից» և անում է հետևյալ անդրադարձը. «Մենք մեր վշտակցությունն ենք հայտնում նաև արտասահմանում ապրող երկու միլիոն Մեր հոգևոր զավակներին, որովհետև այս տխուր օրերին մեզ համար ամենում միաբարձր եղավ ստանալ բազում ցավակցական նամակներ, հեռագրեր և հեռախոսազանգեր, որով Սփյուռքում ապրող մեր քույրերն ու եղբայրները բաժանում են Հայրապետի վիշտն ու հոգեկան ծանր տազնալը, որով մի անգամ ևս Մենք զգացինք ջերմապես, թե մեկ ու անբաժան է Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը իր հոգով, իր ցավերով, իր ճակատագրով, իր վերածնված, հարազատ Մայր Հայրենիքով»:

Սփյուռքահայոց ազգանվեր գործունեությունն, այսպիսով, զնախադասված էր ըստ արժանվույն և ամենաբարձրագույն, այսինքն՝ Հայրապետական մակարդակով: Այս էր անշուշտ, արտասահմանի հայության համընդհանուր ոգևորությունը միևնույն, ավելի բարձր աստիճան բարձրացնող, այդ ոգևորությանը ազգային գիտակցված բովանդակություն ու դրսևորման միասնական ու միահամուռ ձև տվող այն հզոր գործոններից մեկը, որն իր նվաճողությամբ, համեմայն դեպք ներկա իրադրության պայմաններում, չունեց: Սա միաժամանակ, զալիս էր հատակորեն ցույց տալու, որ ինչպես Մայր Աթոռը, այնպես էլ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը կարողացան առավել քան ճիշտ կենտրոն դնել Հայրենիք—Սփյուռք փոխհարաբերության հարցերը, կարողացան Մայր Հայրենիքի համար դժվարին այդ ժամանակահատվածում հմտորեն ու գործադիրությամբ իրար միացնել աշխարհիս բոլոր ծագերում գտնվող հայորդիների ազգասիրական ոգորումները, հոգուտ նույն ազգի համար վճռական նշանակություն ունեցող համընդհանուր գործի: Հայրապետական գործունեության այս կողմը, որը միայն անաբող հիացմունք ու դրվատիք կորզեց ինչպես Խորհրդային Միության,

այնպես էլ արտասահմանյան շատ նշանավոր գործիչների քերականից, եկավ մի անգամ ևս ապացուցելու իր իրավական և դիվանագիտական հիմնավորվածությունը: Լեոնային Ղարաբաղ—Սումգայիթի նեոգեոցիդ հարցերն, այսպիսով, քարծրացված էին հարկավոր խորությամբ ու ամբողջությամբ, համապատասխան ազգային-հոգևորական և համահայկական տարողությամբ: Հիմա էլ անհրաժեշտ էր դուրս բերել այդ հարցերը ընդհուպ մինչև համամիութենական ու համաշխարհային ասպարեզ, աշխարհի բոլոր ժողովուրդներին ի մոտո տեղյակ պահելու եղած անց ու դարձի մասին, այդ մակարդակով ու քառնությամբ պաշտպանելու բռնաբարված արդարությունը և դատապարտելու ոճրագործությունը: Հենց այդ ուղղակի նպատակն ուներ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տիրան վարդապետ Կյուրեղյանի բովանդակային ելույթը Իսպանական հարսեղոնա քաղաքում, այնտեղ ապրիլի 19—24-ին կայացած Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսում: Ելույթ, որից հետո, «Հայր Սուրբը պատասխանեց հանդիսականների բազմաթիվ հարցերին՝ Սումգայիթի, Լեոնային Ղարաբաղի ու Երևանյան ցույցերի մասին» և, որ մեզ համար կարևոր է՝ «Կոնֆերանսի մասնակիցները միահամուռ իրենց համերաշխությունը հայտնեցին հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն»: Նույն այդ խնդրին անդրադարձավ Հունաստանի Թեսալոնիկե քաղաքում ապրիլի 16—24-ին գումարված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նստաշրջանը (Մայր Աթոռի ներկայացուցիչներ՝ Ներսես արքեպիսկոպոս Պողպատյան, Վիգեն վարդապետ Ալքազյան և Խաժակ վարդապետ Պարսամյան), որը պահանջեց Լեոնային Ղարաբաղի ու Սումգայիթի հարցը լուծել ամենայն իրավական ճշգրտությամբ: Նույն այդ ձևով վերջապես, հարցը դրեց Մոսկվայում, մարտի 4—5-ին տեղի ունեցած՝ Խորհրդային Միության խաղաղության կոմիտեի և Խորհրդային Միության խաղաղության ֆոնդի համատեղ հավաքը (Մայր Աթոռի ներկայացուցիչ՝ Նարեկ եպիսկոպոս Ծաբարյան) և այլն: Եվ ինչպես այդ սպասելի էր ու տրամաբանական, վերջնական խոսքն ասելու իրավունքը վերապահված էր իրեն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին, որը հանդես եկավ մայիսի 4-ին, Դոնի Ռոստովում իր աշխատանքները սկսած Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետների ընդհանուր ժողովում:

Սկսելով իր ելույթը Հայրապետական

քարեմաղթություններով, խնդակցություն հայտնելով այն բանի համար, որ՝ «գտնվում եմ վերստին ձեր մեջ» և այդ կապակցությամբ «քերում եմ Հայ Առաքելական Եկեղեցու ողջույնը ձեզ բոլորիդ», Վազգեն Կաթողիկոսը շուտով քննության առարկա է դարձնում զանազան ազգերի կրոնների՝ իբրև գաղափարախոսության տվյալ ձևի, ներքին զարգացման և իրար նկատմամբ ունեցած փոխհարաբերությունների հարցը: «Մեր ըմբռնումով, — ասել է նա, — պատմականորեն ծնունդ առած և զարգացած կրոնները, իրենց միջև եղած նշանակելի տարբերություններով, իրար հարստացնում են, պաշմանով անշուշտ, որ նրանք հեռու մնան մոլեռանդությունից և աշխարհամոլներից: Չլինե՞նք միայն մեկ գրքի մարդիկ»:

Նույն այդ տեսակետը զեկուցողը զարգացնում է նաև տարբեր ժողովուրդների մշակույթների փոխազդեցությունների վերաբերյալ, անելով այն որոշակի եզրակացությունը, որ ազգերը կարող են գաղափարապես հարուստ լինել և հետևաբար, համընդհանուր ճանաչման ու հարգանքի արժանանալ այն դեպքում միայն, եթե նրանք կարողանում են քննադատաբար և համաձայն իրենց ներքին հոգեկան կերտվածքի յուրացնել այն ամենը, ինչ դարերի իրենց գոյատևման ընթացքում որպես մտավոր արժեքներ ստեղծել են հարևան մեծ ու փոքր ազգերը: Հակառակ դեպքում՝ «Ազգերի մշակույթները մեկը մյուսին անհաղորդ նկատել, կամ մեկը մյուսին հակադրել, կամ ժխտել իրավունքը ամեն մի ազգի մշակույթի գոյության ու զարգացման, դա պիտի լինե՞ր պարզապես տգիտություն և հետադիմություն: Ինչքա՞ն անհրապույր պիտի լինե՞ր առաջարկը, եթե բոլոր մարդիկ նույն լեզվով խոսեին, նույն ծալնով աղոթեին, նույն երգերը երգեին: Իրականությունը այն է, որ ազգային լեզուներն ու մշակույթները իրար ամբողջացնում են, իրար իմաստավորում են»:

Բավականին հեղինակալից սկսած և առաջին հաջադեպի կրոնապետական ընդհանուր ժողովի բուն խնդիրների հետ անմիջականորեն չկապվող այս նախապատրաստությունը դիվանագիտական խելացի մտածված մի միջոց է, հիմնական նպատակ-գաղափարը ավելի որոշակիորեն ցուցաբերելու համար: Հենց դրան էլ իր ելույթի շարունակություն մեջ անդրադառնում է Նորին Ս. Օծությունը. «Ահավասիկ իմ կարծիքով, կրոնական և մշակութային հիմքերը այն հասկացողության, որ մեր երկրում կոչվում է ինտերնացիոնալիզմ կամ ինտեր-

նացիոնալ ոգի, որ ամուր հիմքերից մեկն է մեր խորհրդային մեծ երկրի, իր կազմավորման իսկ օրերից սկսյալ»:

Եվ ապա՝ խնդրի տեսական-գիտական պատճառաբանությունը. «Ինտերնացիոնալ ոգի նշանակում է խորհրդային Միության ազգային հանրապետությունների և ամեն մի հանրապետության ազգային տարածքի վրա բնակվող ազգությունների միջև խաղաղ գոյակցություն և գործակցություն, նշանակում է, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային ինքնուրույնությունը և արժանապատվությունը, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային լեզուն ու մշակույթը, որ ամեն ազգություն հարգի մյուսի կրոնական հավատը»:

Այս է խորհրդային Միության տարածքում ապրող մեծ ու փոքր ազգերի գոյության իրավական երաշխիքը: Այն առաջատար ուղեցույց-գաղափար է եղել խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրվանից սկսած, միս ու արյուն է մեր երկրի ամեն մի քաղաքացու համար՝ նրա ամբողջ գիտակցական գոյության ընթացքում, սակայն տարաբախտաբար աղպես չեղավ վերջին մի քանի ամիսներին: Եղան մարդիկ, գուցե և կազմակերպություններ, որոնք ժպրհեցին ձեռք բարձրացնել նաև այս՝ ազգերի հասարակական պահվածքը բնութագրող ամենամեծ սրբության վրա ևս: Վազգեն Կաթողիկոսի խոսքը աչտեղ առավել քան որոշակի է. «Ինտերնացիոնալիզմի մարդասիրական մեծ գաղափարը կարող է վերածվել պատրանքի և խաբկանքի: Ես համոզված եմ, որ եթե վերջին երեսուն տարիներին իսկապես պահպանվեր ինտերնացիոնալ ոգին հայերի հանդեպ, ապա մեզ կխնայվեին Լեոնային Ղարաբաղի տագնապը և Սումգայիթի ողբերգությունը»:

Եվ՝ դատավճռի ուժգնությամբ հնչող շեշտակի եզրակացությունը. «Կրոնական և ազգայնական մոլեռանդություններն ու հակակրթությունները, մեկը մյուսի ազգային-մշակութային ինքնությունը ժխտելու ձգտումները, դեպի ֆաշիզմ տանող ճանապարհն է, մի սև ճանապարհ»:

Հայրապետական այս խոսքերը կարիք ունենան համապատասխան մեկնաբանությունների:

Եվ այս ամենն ասվում էր ամբողջ Կովկասի Կրոնապետների ընդհանուր ժողովի ժամանակ, ասվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի քերական և առանց որևէ վերապահության, ասվում էր այն պարագայում, երբ Կրոնապետների ժողովում նրստած էր նույն ինքը՝ մեզ արդեն ծանոթ Ծելիս-Ուլ-Իսլամ Խաջի Ալլահշուքյուր Փաշա-Ջադեն...

Լեոնային Ղարաբաղի և Սումգայիթի նեոգեոցիդի հետ կապված հարցերն, այսպիսով, բարձրացված էին թե՛ ըստ խորության և թե՛ ըստ բովանդակության, բարձրացված էին՝ սկսած Մայր Աթոռից, այսինքն Հայաստանի տահմաններում, իսկ Դոնի Ռոստովի Հայրապետական եկույթով, նաև համամիութենական ու համազգային ծավալով, անշուշտ ներառյալ նաև Սփյուռքը: Եվ ինչպես Մալր Աթոռի, այնպես էլ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հետագա գործունեությունը, — ի դեպ շատ ավելի եռանդալից ու անդադրում, հագեցած ընդգրկումների նորանոր ոլորտներով, — ընթացավ ձեռք բերածը ըստ ամենայնի խորացնելու և հետևաբար ազգային-հայկական ներքին բովանդակությամբ ավելի հարուստացնելու ճանապարհով:

ՍՈՒՐԵՆ Շ. ՎԱՆԵՑԻ

